ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ. Մարտունի, Շահումյան 2,

Հեռ. 060-74-34-01

№ 453

24 մայիս 2021 թ.

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Գ.ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սանոսյան

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի պահանջներից ելնելով, ուղարկվում են Մարտունի համայնքի ղեկավարի կողմից 17.05.2021թ. մինչև 21.05.2021թ. ընկած ժամանակահատվածում ընդունված որոշումները:

Առդիր՝ 9 թերթ:

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՎԵՏԻՍՅԱՆ

կատարող՝
Ռ.Սահակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 176-Ա

17 մայիսի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔՆԵՐԻՆ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի>> Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների ժամանակ կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին անվճար քարոզչական պաստառներ փակցնելու համար Մարտունի համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ տեղերը.

ա) Երևանյան և Թումանյան փողոցների խաչմերուկ

բ) Երևանյան և Մյասնիկյան փողոցների խաչմերուկ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

17 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 177 -Ա

17 մայիսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 15.07.2020 ԹՎԱԿԱՆԻ «ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 172 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Մարտունի համայնքի ղեկավարի 15.07.2020 թվական «Մարտունի համայնքապետարանում համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման աճուրդային հանձնաժողով ստեղծելու մասին մասին» թիվ 172-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը:

1.1 Որոշման 1.3 կետի «Գագիկ Ոսկանյան» բառերը փոփոխել «Ռուբիկ Սահակյան» բառերով:

1.2 Որոշման 1.5 կետի «Ռուդիկ Հարությունյան» բառերը փոփոխել «Ամուր Գասպարյան» բառերով:

1.3 Որոշման 1.5 կետի «պետ» բառից հետո լրացնել «ժամանակավոր պաշտոնակատար» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

17 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 178-Ա

17 մայիսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարտունի համայնքի սոցիալապես անապահով ներքոհիշյալ քաղաքացիներին տրամադրել ֆինանսական օգնություն հետևյալ չափերով.

Հ/Հ	Ազգանուն անուն, հայրանուն	Գումարը
1.	Էդվարդ Գուրգենի Հովհաննիսյան	50000
2.	Սվետլանա Վարազդատի Մելքոնյան	30000
	Ընդամենը 80000 (ութսունհազար) Հայաստանի Հանրապետության դրամ	80000

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

17 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 179-Ա

17 մայիսի 2021 թվական

ԱՌԱՆՑ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 72/2-2 ՀԱՍՑԵԻ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Սերյոժայի Եղոյանի դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 02.02.2002 թվականի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի մասի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» թիվ 88-Ն որոշման պահանջներով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արմեն Սերյոժայի Եղոյանի սեփականության իրավունքով պատկանող քաղաք Մարտունի, Երևանյան փողոց 72/2-2 հասցեի 50,6 քմ մակերեսով շինության նպատակային նշանակությունը հասարակականից փոփոխել բնակելիի, իսկ գործառնական նշանակությունը շինությունից փոփոխել բնակելի տան, առանց նախագծային փոփոխությունների:
2. Պարտավորեցնել Արմեն Սերյոժայի Եղոյանին՝ վճարել տեղական տուրք 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Պարտավորեցնել Արմեն Սերյոժայի Եղոյանին դիմել Հայաստանի Հանրապետության Անշարժ Գույքի Կադաստրի Կոմիտե Երևանի տարածքային ստորաբաժանում կատարելու գրանցում:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

17 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 180-Ա

17 մայիսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ «ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 51/15 ՀԱՍՑԵԻ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 337-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի Հայաստանի Հանրապետության Կառավարության 18/05/2006 թվականի թիվ 912-Ն որոշման 4-րդ գլխի 33.1 և 33.2 հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարտունի համայնքի ղեկավարի 29 դեկտեմբերի 2020 թվականի «Մարտունի քաղաքի Երևանյան փողոց թիվ 51/15 հասցեի ինքնակամ կառույցն օտարելու մասին» թիվ 337 -Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները:

1.1 Որոշման 1-ին կետի «խանութին» բառը փոփոխել «բնակարանին» բառով:

1.2 Որոշման 1-ին կետի «որպես Կարեն Հայրապետյանի» բառերից հետո լրացնել «(նույնականացման քարտ՝ 010747988, ծնված՝ 06.06.1974 թվականին, տրված՝ 15.02.2019 թվական, տրված՝ 043-ի կողմից)» թվերով և բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

17 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 181-Ա

17 մայիսի 2021 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 01.12.2020 ԹՎԱԿԱՆԻ «ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԼՅՈՒԴՎԻԿ ԱՐՇՈՅԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ 23.05.2019 ԹՎԱԿԱՆԻ ՏՐՎԱԾ ԹԻՎ 06 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 305 -Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Մարտունի համայնքի ղեկավարի 01.12.2020 թվական «Մարտունի քաղաքի բնակիչ Լյուդվիկ Արշոյի Հովհաննիսյանի 23.05.2019 թվականի տրված թիվ 06 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 305-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները:

1.1 Որոշման 1-ին կետի «մայիս» բառը փոփոխել «նոյեմբեր» բառով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

17 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 182-Ա **18 մայիսի 2021 թվական**

ԿԱՐԵՆ ԳԱՐՍԵՎԱՆԻ ՆԻԿՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքային տնտեսության բաժնի աշխատակիցների կողմից կազմված 04.05.2021 թվականի թիվ 32 արձանագրությունը, և 10.05.2021 թվականի իրավաբանի թիվ 35 եզրավարույթը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և 17.05.2021 թվականի Մարտունու համայնքապետարանում իրականացված վարչական վարույթի ընթացքում բացահայտված գործի բոլոր հանգամանքները, հաստատված համարելով Կարեն Գարսևանի Նիկոյանի կողմից իր սեփականությունը հանդիսացող հողամասի վրա ինքնակամ շինություն կառուցելու փաստը և ղեկավարվելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 26 -րդ կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կարեն Գարսևանի Նիկոյանի նկատմամբ նշանակել տուգանք 200000 (երկու հարյուր հազար) դրամի չափով քաղաք Մարտունի Երևանյան 42 բազմաբնակարան շենքի հյուսիսային մասի հողամասի վրա ինքնակամ շինություն կառուցելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության հիմքով :

2. Պահանջել Կարեն Գարսևանի Նիկոյանից 200000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանքը վճարել համայնքապետարանի 900145101169 հաշվի համարին 15-օրյա ժամկետում:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբան-գլխավոր մասնագետ Զավիկ Խաչատրյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարեն Գարսևանի Նիկոյանի որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

18 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 183-Ա

18 մայիսի 2021 թվական

ԺԱԿ ՀՈՒՍԻԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015 թվականի №596–Ն որոշման, Մարտունի համայնքի ավագանու 16.12.2020 թվականի թիվ 82 -Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Ժակ Հուսիկի Մանուկյանի կողմից ներկայացված դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ժակ Հուսիկի Մանուկյանին տալ քաղաք Մարտունի, Մայաթ-Նովա թիվ 6 հասցեում գտնվող հողամասի վրա նոր կառուցվող բնակելի տան, վերակառուցում՝ նկուղային մասով բնակելի տան, ավտոտնակի և պարսպի շինարարության թույլտվություն :

2. Պարտավորեցնել Ժակ Հուսիկի Մանուկյանին Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:

3. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունու համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

18 մայիսի 2021 թվական
ք. Մարտունի